Ը. ՏԱՐԻ — ՇԱԲԱԹ 19 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1905 — ԹԻՎ 758

ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՇԱԲԱԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Отговорникъ: СТЕПАНЪ КАНАРЯЪ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուլկարիոյ համար տարեկան 12 ֆր. վեցամսեայ 7 «
Արտասահմանի համար տարեկան 15 ֆր. վեցամսեայ 8 «
Ամերիկայի համար տարեկան 3 տլ. վեցամսեայ 1.50 «

Ծանուցման տողը առաջին երեսին համար 40 սանթիմ իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ ք։ երեքին ապրի անգամներու համար 20 0/0 զեղչ կը լայ։

—o—

Վարձայի համար ձեռք 10 սանթիմ ք

Դրամակ եւ դրամ ղրկել խմբագրութեան հասցէին

Редакция на вѣстникъ "Шаржумъ„ Варна

Redaction du journal „Charjoum» Varna (Bulgarie)

—o—

Պուլկարիոյ համար ձեռք 15 ՍԱՆԹԻՄ
Արտասահմանի համար ձեռք 20 ՍԱՆԹԻՄ

—o—

Գրութիւնք եւ չեն տրուիր

«ՇԱՐԺՈՒՄ»ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՄՆԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԷՏՔ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ

ԲՈՐԲՈՔՎԱԾ ՀՆՈՑ

—)o(—

Ռուսաստանը, միապետական մեռած այդ միապաղաղ զանգուածը այսօր բոլորովին կերպարանափոխված է. երկիրը վերածվել է յեղափոխական հնոցի ու նրա արձակած բոցերը ծաւալվելով ընդարձակ երկրի բոլոր կողմերը քաղաքական այն մեծ հրդեհն են առաջ բերում որը 20րդ դարի սկզբում բռնկելով Եւրոպայում վերջ պէտք է տայ 19րդ դարի մեծ հրդեհից խուսափած և մինակը մնացած միապետական խարխուլ շէնքին...

Շատերը սպասում էին որ Ռուս-ճաքոնական պատերազմի վերջանալուց յետոյ յեղափոխական շարժումները պէտք է դադրեն Ռուսիայում. ու պետական Դուման իսկ որ Նիկոլան բռնադատված խոստացաւ իր ժողովրդին, չը պէտք է իրականութիւն ստանայ և կրկին ռուսական կընուտը անսանձօրէն պէտք է թագաւորէ ցարերի և մուժիկների հայրենիքում։

Սակայն իրողութիւնը բոլորովին հակառակն է։ Այսօր ամբողջ Ռուսիան յեղափոխական հրդեհի մէջ է... Գործադուլները հսկայական ու անչափ են, մայրաքաղաքներին և մեծ քաղաքներին սով է սպառնում որովհետեւ հաղորդակցութիւնները դադրած են։ Սիբիրի Տօմսկ քաղաքում ապստամբած տարը ռամկավարական հասարակապետութիւն է պահանջում. ասում են որ Խարկովում յեղափոխական ժամանակաւոր կառավարութիւն է հիմնվել... ամեն մի ռուսահը պատակ այսօր ըմբոստութեան դրօշն է բարձրացրել, տարրական դպրոցների երկսեռ սաներից սկսած մինչեւ համալսարանի ուսանողները, բիւրաւոր գործաւորները, գիւղացիներ, ազատական ինտելիգենցիան ապստամբի կարմիր շապիկն են հագել և յեղափոխութեան հրաբուխի որոտումներով ու պոռտկումներով դղրդացնում են ինքնակալ ցարերի երկիրը պալատները և ամէն ինչ որ բռնութեան անսանձութեան, կամայականութեան հետքն ու դրոշմն է կրում։

Միապետութիւնը շմլորած է. տատանող ու վարանող։ Նա ոչ կորով ունի դէպի յետ բացարձակ միապետականութիւնը ցանկելու և ոչ դէպի սահմանադրութիւն եւրոպական մտքով։ Նրա ծառաների բերաններով ժողովրդին հաղորդվում է որ շուտով պէտք է տրվի ժամանակ, հաւաքումների լայն ազատութիւն, անձերի և ինչքերի անմասնչելիութիւն, վերջապէս աւելի լայն իրաւունքներ նորաստեղծ պետական Դումային—սակայն այդ խոստումները այլեւս բաւարարութիւն չեն տալիս ռուս ըմբոստացած ժողովրդին. նա իրական գործ է ուզում, դրական քայլ դէպի իրական սահմանադրական իշխանութիւն, դէպի միահեծան ինքնակալ իշխանութեան սահմանափակում...

Շնորհաւորում ենք ռուս ժողովուրդին և նրա անձնուէր ինտելիգենցիային... մաղթելով կատարեալ յաջողութիւն իրենց այդ վիթխարի պայքարին, որը այնքան մեծ ու արժէքաւոր զոհեր խլելով հանդերձ չը կարողացաւ վհատեցնել այդ քաջարի ռազմիկներին։ Սրտատրոփ սպասում ենք այն վիթխարի տեսարանին երբ բոցավառված ռուս յեղափոխութեան հնոցը իր վիթխարի հրեղէն լեզուներով պիտի լափէ բռնակալական այն մեծ շէնքը որ սեղմված ռուս ազնիւ ժողովրդի նոյն իսկ ամբողջ Եւրոպայի կրծքին սեղմում շնչահեղձ էր անում ամեն մի ազատական ձգտում և թռիչք, որոնք նպատակ ունէին տանջվողներին ազատելու միապետական բռնակալ ճիրաններից...։

ՎԱՐԴՕ

—◆◆—

ԱՆՑԱԳՐԵՐՈՒ ՎՆԱՍԸ Ի ՔԷՄԱԽ

Երբ 1895 ընդհ. Հայկական ջարդի տագնապալից կոտորածը ողողեց արեան գետերով բոլոր Հայաստանը՝ Քէմախն ալ զերծ չմնաց իր շրջակայ Հայ գիւղերով կահ կարասեօք ոչնչացման դատապարտուեցաւ. խաւարամիտ հայ հասարակութիւնը վաղահաս պատուհասէն անտեղեակ կը քնանար, և այդ կոտորածի պահուն սարսափահար փախաւ. հայոց կողմանէ զէնքի դիմող ոչ ոք գտնուեցաւ։

Քէմախի կառավարութիւնը, իբր տէրութեան և Օսմ. գահուն հաւատարիմ հպատակ ճանչնալով արտոնեց անցագիր տալը. նախորդի նման, յեղ. կուսակցութեանց հետ կապ չունեցողներ կասկածելի չը նկատուող անհատք շարունակեն իրենց ճամբան ո՛չ թէ Պոլիս այլ թէ արտասահման և թէ Թուրքիոյ ներքին գաւառները. այդ դժնդակ կացութեան սէջ երբեմն ալ արգելքի կը հանդիպինք. նոյն անհաճոյ վարմունքը ցարդ կը յարատեւէր. շատ անգամ պատրուակներ կորոնէր որ կաշառակերութիւններն դիւրանար։ այժմս ալ ճիշդ մէկուկէս տարի կընէ որ նոր փլանի մը ձեռնարկեց, քաջ գիտնալով որ հայերն ստիպուած են անպատճառ պանդխտիլ և պարէն որոնել ասդ անդ թափառելով։ Մէկ անցագիրը 6–7 ոսկիի սուղի նստեցնելու հայակործան դաւին դիմեց, և ահա օրերս Հայրենիքէն եկած լուրերը կը հաստատեն որ սէկ մազպաթան 7 ոսկիով հազիւ կառնուի, զինուորական տուրքը 38 ղրշ. կը. 55 ղրուշի բարձրացուցած է. երեք տարի առաջ նոր կանոնագրութեան մը ձեռնարկեց կառավարութիւնը, զինուորական տրոց մասին. Անտարակոյս Եւրոպան բան մը ըսած պիտի ըլլայ այս կէտը գործադրելուն. Եւրոպայի շուտախաբ տէրութեանց առջեւ հաճոյ երեւնալու համար 20 տարեկանէն վար տղոց՝ վաթսունէն վեր ծերոց՝ պաշտօնէից կաղերու և աղքատաց տուրքերը չառնուին, բայց չէ թէ կառավարութիւնը զեղչէ այդ գումարը, այլ կարող և հարուստ անհատից վրայ բեռցուի, որ իր հայաջինջ ծրագիրը գործադրած ըլլայ. հարուստներն ալ աղքատանան, և Եւրոպան ալ խաբուի թէ այդ անուն կանոն մը հաստատելու յաջողած է։ Մէկ կողմէն անցագրերը և անոր անհամար դժուարութիւնները միւս կողմէն տուրքերու եռապատիկ քառապատիկ բազմապատկուիլը ժողովուրդը կը քամեն, տասանորդի (Աշուրի) տուրքի մասին երկար պիտի ըլլայ բացատրել. որ համեմատաբար ոչ նուազ կոտորած ձգած է Քէմախ։ Այդ մասին կրնամ ըսել որ ընթերցողք ուսսնմնասիրած չեն. ահաւոր գումարներ կը յատկացուին. որ մեծ տնտեսական տագնապ կը պատճառէ ըստ օրինի փոխանակութենէն մէկը տալու, կէսէ կէս տալու յարատեւ բրնութեան մը զոհը եղած են. և այդ ալ տեղւոյն միրքմիրանի պաշտօն ստանձնող բարձրաստիճան մարդոց և թուրք վաճառական կոչուող վայրենիներու ձեռքովը կը կատարուի։ Գիւղից աշուրը ըստ սովորականին տարին անգամ մը աճուրդի կը դրուի։ Վերոյիշեալները այնքան սարսափ ազդած են ժողովրդեան վրայ. ոչ ոք կը համարձակի ոչ դնել, հայերն բնականաբար կրկուած են այդ շնորհէն. թուրք ազան ալ փաշաներու հրամանին կ'սպասէ, այդ առիթէն օգտուած 100ի տեղ 50 առնելու կարող կըլլան. օրինակ Բազարիճը, կառավարութեան շարթնամէի մէջ աճուրդով 180 լիրայի սակարկուած է, գիւղացին կը վճարէ 300 լիրայ. տարին 120 լիրա շահ, ճիշտ 15 տարին կանցնի այս ահռելի աւարը մուտ գտած է, չէ թէ միայն Բազարիճը այլ բոլոր Հայ գիւղերը նոյնօրինակ կը տուժեն եւ դեռ պիտի տուժեն ալ։

ՀՐԱՉԵԱՑ ՇԱՄՏԱՆԵԱՆ

5 Հոկտ. 1905

ՌՈՒՍ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՊԱՐՍԿԱՀԱՑԵՐԸ

—)o(—

Խաղաղարար Ցարի կառավարութիւնը բաւական չէ ինչ որ գազանութիւններ գործեց իր հպատակ հայերի դէմ, քաջալերեց Կարմիր Սուլթանին հպատակ հայերին կոտորելու մէջ, այսօր էլ նա ստորին գործիքների ձեռքով աշխատում է նոյն գազանութիւնները ստեղծել ռուս և Պարսկաստանում. ահա այդ խարդաւանքների մասին ինչ է գրում «Դրօշակ»ի թղթակիցը Թէհրանից։

«Բաւական ժամանակից իվեր

այստեղ հաստատուել է մի վրացի, որ ուղարկուած է Կովկասից շատ կասկածելի պաշտօնով. Նա շարունակ պրոպագանդ է անում պարսիկների շրջանում, գրգռելով սրանց հայերի դէմ. Այդ տեսակ պրոպագանդի հետեւանքը պիտի համարել՝ որ պարսիկները զաթիլի օրը պատրաստուել էին յարձակուել հայերի վրայ, որ սակայն կառավարութիւնը ան միջապէս արգելեց. Բայց վրացին շարունակեց իր զզուելի քարոզչութիւնը. Բագւի դէպքերը նրա համար լաւ առիթ եղան. յաճախ հաւաքում էր մոլլաներին և ասում նրանց. «տեսնո՞ւմ էք, ինչպէս հայերը այնտեղ բռնաբարում, կոտորում են ձեր մայրերին ու քոյրերին. սրբապղծում են ձեր մզկիթները. զէնք առէք ձեռքներդ ու վրէժխնդիր եղէք»... Մի անգամ մօտերս, մոլլաների հետ նա կանչում է և Իմամ Հուսայնի տղին և սկսում է քարոզել նոյն ոգով, բայց այս անգամ փորձանքի է հանդիպում. Իմամ Հուսայնի տղան ժողովից յետոյ գնում է թագաժառանգի մօտ և բոլորը պատմում նրան. Թագաժառանգը գիշերով մարդ է ուղարկում, բռնել տալիս վարձական քարոզչին իր բոլոր թղթերով, որոնցից յայտնւում է, որ նրան թելադրողը ռուսաց դեսպանատունն է. Վերջինս միջամտում է՝ իր հպատակին ազատելու, բայց թագաժառանգը չէ յանձնում յանցաւորին, ասելով, որ պիտի պահէ նրան մինչեւ իր հօր, Շահի գալուստը... Այդպիսով բարձրաստիճան լրտեսը այժմ վայելում է պարսկական բանտի մութ ու խոնաւ մթնոլորտը. Նման լրտես-քարոզիչներ երեւան են եկել նաև Ղազվինում ու այլ քաղաքներում»...

Ուրախալի է որ պարսից բարի և իր պետութեան շահերը ըմբռնող Շահը չէ ենթարկվում ոչ իր հաւատարիմ ռուսահպատակ պարսիկների և ոչ էլ ցարիզմի ստոր գործիքների դաւերին.

Դա իհարկէ աշխարհի չորս կողմում բզքտված վիրաւոր հայ ժողովրդի համար մեծ մխիթարութիւն է և թող բարի Շահը համոզված լինի թէ հայ ժողովուրդը երբէք չի մոռանայ իր այդ քարեացակամութիւնն և միշտ կը ցանայ Պարսկաստանի յառաջադիմութեան գործին ծառայել հաւատարմօրէն և անձնուիրաբար.

ՆԱՄԱԿ ԳՕՆԴԱՆՁԱՅԷՆ

Ինչպէս որ նախորդ թղթակցութեամբս իմացուցած էի, անցեալ կիրակէ, ամսոյս 2ին «Երգեցիկ եւ Թատերասիրաց» խումբի առաժամեայ յանձնաժողովը մասնաւոր ազդագրով ժողովի հրաւիրած էր քաղաքիս հայ հասարակութիւնը, նորակազմ խումբերու կանոնագրի քուէարկութեան եւ վաւերացման համար.

Ժողովին կը նախագահէր տեղւոյս հոգեւոր հովիւ Արժ. Տէր Արիստակէս քահանայ Փէսլեան, որ ի ներկայութեան ընտրեալ բազմութեան մը ժողովը բանալով գեղեցիկ բաւական խօսութեամբ մը բացատրեց երգեցողութեան եւ մանաւանդ թատրոնի ժողովրդեան վրայ ունեցած բարոյական մեծ ազդեցութիւնը խորհուրդ տալով ներկաներուն սիրով մասնակցիլ մի այսպիսի կրթական ձեռնարկի.

Տէր Հօր խօսքերը խորապէս ազդեցին ներկաներուն վրայ, Դիւանի ընտրութեան ձեռնարկուելով, առանձնապէս ընտրուեցաւ ուսուցիչ Տիրար Մ. Սեթեան, որ երկարօրէն խօսեցաւ ներկաներու խումբի կազմակերպութեան մասին՝ մանրամասնօրէն բացատրելով այսպիսի խումբի մը կարեւորութիւնը եւ նորա տալիք օգուտները. Յետոյ առաժամեայ յանձնաժողովոյ պատրաստած կանոնագիրը յօդուած առ յօդուած վիճաբանելով քուէարկուեցաւ. Այս միջոցին տեղի ունեցած վիճաբանութիւնները եւ ներկաներուն առանց խտրութեան ասոնց մասնակցիլը, գործը կանոնաւոր հիման վրայ դնելու գովելի նպատակաւ եկաւ ապացուցանելու թէ նորակազմ խումբը իւր բարձր նպատակաւ որչափ կարեւոր դիրք մը պէտք է գրաւէ մեր ազգային հաստատութեանց շարքին մէջ.

Մի քանի վայրկեանի դադարէ վերջ, տասն եւ հինգ ընտրելիներու ցանկի մը մէջէն՝ քուէից առաւելութեամբ հինգ հոգիէ բաղկացեալ վարչական ժողով մը ընտրուեցաւ տեսեալ կերպով, Տիարք Մ. Սեթեան Մ. Պետիկեան, Ճ. Ալթունեան, Ե. Ի. Շամպուրակեան եւ Գ. Անտոնեան.

Կանոնագրի քուէարկութիւնը 4 ժամ անընդհատ ներկաներու ուշադրութիւնը լարուած պահած ու ժամանակն ալ ուշացած ըլլալով որոշուեցաւ օրակարգի միւս խնդիրները տասն եւ հինգ օր վերջ գումարուելիք երկրորդ ընդհանուր ժողովի մէջ նկատողութեան առնել.

Ուրախ ենք դիտելու որ խումբերու կազմուելը մտադրուած օրին իսկ ժողովրդին մէջ սեւ ոգեւորութիւն մը սկսած է ամեն տեղ եւ անդադար խօսակցութեան առարկայ դարձած է սոյն ձեռնարկը. կը յուսանք որ շը նորհիւ վարչական ժողովոյ լուրջ գործունէութեան նորակազմ խումբը մրութեան կապ մը պիտի դառնայ կրօնական, քաղաքական, մտաւորական եւ դասակարգային բաժանումներով իրարմէ անջատուած եւ նոյն իսկ թշնամացած գաղթականութեան բոլոր մասերուն մէջ.

Մենք վստահ ենք վարչական ժողովոյ անգամոց մտաւոր կարողութեան վրայ եւ եթէ փափագ մը ունինք այն է խնդրել իրենցմէ որ ի նկատի ունենալով բարոյական այն մեծ պատասխանատուութիւնը, որ իրենց վրայ կը ծանրանայ՝ գիրար գերազանցեն թէ գործունէութեան եւ թէ նպատակի հասնելու համար իրենց ցոյց տալիք զոհողութիւններով

Նոքա պէտք է գիտնան թէ որչափ որ բարձր է այն նպատակը որուն կը ծառայէ մարդ, այնչափ եւ աւելի ենթակայ է հարուածուելու եւ քննադատուելու անոնց կողմէ որք միշտ հանդիսատես կը մնան ո եւ է օգտակար ձեռնարկի առանց մի փոքր օգնելու եւ միշտ պատրաստ մատնացոյց ընելու գործին թերի կողմերը եւ ասով արդարացունելու իրենց մեղադրելի անտարբերութիւնը.

Փոստանցայի հայութիւնը որ այսօր իւր բազմամարդութեամբ ու նիւթական տեսակէտով պալքանեան հայ գաղթականութեանց մէջ առաջին տեղը կը գրաւէ պիտի գիտնայ գնահատել իր ծոցէն ծնունդ առած եւ նորա կրթական հայելին լինելու սահմանուած կազմակերպութեան մը պէտքը եւ ոչ մի ջանք չը պիտի խնայէ նորա կանոնաւոր զարգացման.

Արդէն քաղաքիս մէջ մի քանի տարիներէ ի վեր գոյութիւն ունեցող բարեգործական եւ աղքատախնամ ընկերութիւններն եւս հարկաւ հաշտ աչօք պիտի դիտեն նորածին խումբը որու սահմանուած է լրացուցիչ մասը լինել ազգային ինքնաճանաչութեան արտայայտութիւնը եղող վերոյիշեալ ընկերութիւններու.

Անկեղծօրէն փափագելով յարատեւութիւն եւ յաջողութիւն քիչ օրէն յուսամ թէ խումբի առաջին ներկայացման օրը, աւետելու երջանկութեան պիտի արժանանամ.

Ե. Ռ. Շ.

Դիւստանցայ 12 հոկ. 1905

ՍԷՍԻԼԻԱ Մ. ՊԼԷՃԻ

21

ԴԷՖԻ

Հայկական Ռոման մը

(Թարգմանութիւն Անգլիերէնէ)

Դ.Լ. ԺԴ.

«ՄԵՌՆԵԼՈՒ ԵՆՔ, ՍԱԿԱՅՆ»

Այո՛, Արամաքանը կանգնած էր դէմս, վեհ ժպիտը—հոգեզմայլ հպարտ նայուածքը—որ երէկ գիշեր տեսայ իր վսեմ դէմքին վրայ, տակաւին հոն էր. սակայն, մինչեւ այդ օրը հագած քուրձը մէկ կողմ դնելով՝ հիմա արքայական պերճանքով մը զգեստաւորուած էր ան. Ռուրձին փոխանակած էր շողշողուն գոհարներով ծածկուած Ասորեստանի պերճաթոյր թաւիշը, ու նախապէս գօտիի դեր կատարող կանեփի կտորին փոխարէն զետեղուած էր ոսկեզարդ շալ մը. Ուսերուն վրայէն կախուած էր միևնոյն արքայական թաւիշէն ու պերճօրէն ոսկիով եզերուած կրկնոց մը. Ադամանդէ շղթայ մը ինկած էր վզէն, ու գաւթոնը թանկագին քարերու շլջանակով մը զարդարուած, որուն մէջ ադամանդը, սուտակը, զմրուխտը իրենց ճարտար արուեստով կը փայլէին.

— Ո՛հ, հայր իմ. գոչեցի կրկին, ու ակամայօրէն ձեռքս աչքերուս վրայ դրի, այդ շլացուցիչ շքեղութիւնը ծածկելու համար.

— Մի՛ վախնար, Դէֆիս, դուն չես հասկցած. Ձեռքը տարածեց ու քանի մը քայլ ինձ մօտեցաւ. Յառաջ գացի ու երկնցուցած ձեռքը բռնելով՝ հոմբուրեցի զայն. ապա յարգանքով ծնրադրեցի, ինչպէս որ ըրած էի միշտ, իր օրհնութեան համար. Ան օրհնեց զիս—այս հոյակապ ոսկեզարդուած իշխանը—ինչպէս որ քրձազգեստ հայրս միշտ կը-նէր, բայց... ո՛հ, տխրեցնելու աստիճան տարօրինակ էր այդ... ի՞նչ պատահած էր թշուառ Արամաքանին—հօրս Տազնապայոյզ ու անաբեկ—ծնկաչոք մնացի. Հայրս խանդաղատանքով բարձրացուց զիս և քովի ցած աթոռը ցոյց տալով՝ ըսաւ. «Նստէ՛, Դէֆիս, շատ բաներ ունիս լսելու... Այս բոլորը անհասկանալի է քեզ.»

— Այո՛, հայր իմ ըսի, Դէֆին տակաւին երեխայ մ'է. Էն շատ բան չի գիտէր. Ի՞նչ կը նշանակէ այս.

Այս ըսելով մատս Ասորեստանեան գեղատիպ թաւիշին վրայ դրի—«եւ ա՞յս... և ա՞յս...» յարեցի, յաջորդաբար ոսկեղէն շալը, շողշողուն ադամանդները ցոյց տալով. «Դէֆիս մոռցած է. ըսաւ հայրս, հրանալի ժպիտը չրթուներուն վրայ ու սուր ձայնին բովանդակ մեղրածորաններդաշնակութեամբը. որ Արամաքանը կը հանի այս... և այս... և այս—գրեթէ խաղալու նման իմ բռնած կրկնոցս, գօտիս և ադամանդները ցուցնելով—այն պատճառով, որ Բագրատունիներու վերջին զաւակն ըլլալու ցեղային իրաւունքն ունի, որոնք երկու դար շարունակ ազատութիւն, պաշտպանութիւն և բարգաւաճում շնորհեցին տարաբախտ Հայաստանին. Թէպէտեւ հիմա մոխրակոյտերու վրայ կանգնած մուրացիկ մըն եմ սակայն, տակաւին կը պատշաճի ինձ արքունի իշխանի մը նման հագուիլ. տեսնելով որ ժամառ ժամ վճռագրիս կ'սպասեմ բարձրանալու համար այն գահին, որուն փառքին առջեւ բոլոր աշխարհային գահերը օրը նետուած թղթի կտորի մը նման կոչնչան ու կանհետին.

Մինչ կը խօսէր, այն ժպիտը՝ որ շրթներուն վրայ կը խաղար՝ նոր գիշերուան մտազմայլ արտայայտութեան փոխուեցաւ.

Ասկէ ի զատ, Դէֆիս. քսան տարի առաջ. այս միևնոյն օրը, այս միեւնոյն հագուստով—այս արքունական զգեստներով—տուն բերի, այն ատեն իրեն յարմար—տխրութեամբ շուրջը նայեցաւ—չքնաղ հարսս, հրեշտակային մայրդ. հիմա՝ ալ միեւնոյն տարազով կերթամ դիմաւորել Զէնի. Լաւ է որ, Դէֆիս, փեսան ինչ տարազով որ բերաւ հարսը իր տրտին—իր տունը, նոյնով ալ միանայ էնոր. Լաւ չէ՞. Դէֆիս.

Լուռ էի, Հօրս վարմունքին մէջ այնպիսի անբնական եղանակ մը, դէմքին վրայ այնպիսի արտասովոր արտայայտութիւն մը կար, որ վախցայ թէ, խելացնորութիւնը, որ յաճախ մահէն առաջ կուգար, պաշարէր էր զինքը. Ապա հանդարտութեամբ ըսի.

— Ո՛չ. հայր իմ, չեմ վախնար մեռնելէ. բայց... բայց... մեռնելո՞ւ ենք...

Ա՛հ, մահն ու կեանքը երկու տարբեր բաներ են Արամաքանին ու Դէֆիին համար, կը խորհէի, մինչդեռ հայրս լուռ հարցական նայուածքով մը զիս կը դիտէր. Հօրս՝ վշտերով խելայեղուած ցաւատանջ կեանքին համար՝ մահը փառք եւ պսակ մը պիտի ըլլար. Ինձ համար... ո՛հ, հազիւ հասած էի մինչեւ այս աստիճանին, երբ հարս ըսաւ.

—Դէֆիս կը նախընտրէ՞ ապրիլ...

ՕԹԷԼԼՕ

Պ. Գալֆայեան արդէն պատրաստուած էր յառաջիկայ շաբաթ օրը Օթէլլօն ներկայացնել, տոմսակները պատրաստ էին ծախուելու համար երբ բարեկամներ լսելով թէ ազգային մարմինները անգամ մը առաջարկած են տաղանդաւոր դերասանին ի նպաստ ազգային վարժարաններու ներկայացում մը տալու այդ խնդիրը առկախ մնացած էր զանազան թիւրիմացութիւններու պատճառով, միջամտեցին և երկուստէք սիրով ու պատուաբեր համաձայնութիւն մը կայացաւ։ Այդ պատճառով ներկայացումը յետաձգուեցաւ յառաջիկայ երեքշաբթի, և պիտի տրուի ի նպաստ Ազգային վարժարաններու Վառնայի ազգային մարմիններու կողմէն պ. Գալֆայեանի գոհացուցիչ և պատուաբեր վարձատրութեամբ մը։ Պէտք է յայտնել որ պ. Գալֆայեան այդ վարձատրութիւնն ալ չը պիտի ընդունէր, եթէ ներկայիս անհրաժեշտօրէն դրամի պէտք չունենար....

Այս պատուաբեր համաձայնութիւնը իր այն սիրուն կողմը ունի, որ թէ ազգային դպրոցները պիտի օգտուին, և թէ պարոն Գալֆայեան առանց շատ ծանր յոգնութիւններու իր տաղանդին Վառնայի հայ հասարակութեան ուժերուն համեմատ համեստ վարձատրութիւնը պիտի ընդունի, բարոյական գոհացումի մը հետ միասին։

Ուստի Վառնայի հասարակութեանը կը մնայ թատրոնը լեցնել հանդիսականներով ապացուցելու համար թէ իրեն միանգամայն սիրելի են թէ մանուկ սերնդին կրթական գործը և թէ հայ տաղանդը։

ՕՐԳԱՆ

Ֆիլիպէի մէջ լոյս տեսաւ «Ռազմիկ» թերթը Պ. Ռուբէն Զարդարեանի խմբագրութեամբ և խմբագրական մոլեռնի պեկավարութեամբ։

Այդ թերթը Դաշնակ. պալք. կեդրոնական կոմէտէի պաշտօնական օրգանն է, որի համար Անկախ «Ճարժումի» գոյութիւնը հաճելի չէր և չէ։ Իբրեւ այդպիսի մի օրգան, ի հարկէ նա պէտք է լինի լոկ արձագանգը Դաշնակցութեան պաշտօնական մարմինների, ինչպէս «Հայրենիք»ը Ամերիկայում և «Հորիզոնը» Եգիպտոսում։ «Ռազմիկ» լինելով պաշտօնական օրգան բը նական է որ Դաշնակցութեան կողմից ամեն տեսակ աջակցութիւն պէտք է ստանայ իր գոյութիւնը յարատեւելու համար. պաշտօնական օրգանների վարիչները, օրոնք վայելում են կուսակցութիւնների բարոյական մանաւանդ և նիւթական աջակցութիւնը իրենց քաղաքացիական անկախութիւնը ծախելով, բնական է որ երբէք հնարաւորութիւնը չեն ունենալու ժողովրդային կեանքի զանազան երեւոյթների մասին իրենց անկախ դատողութիւնները ունենալ. այդ վարիչները մի տեսակ խողովակների դեր են կատարում ժողովրդի և կուսակցութեան վարիչ շրջանակների միջեւ, որոնցով ժողովրդին են հասնում կուսակցութեան վարիչների միակողմանի և միայն կուսակցութեան շահերով պեկավարվող հայեցակէտները, դատողութիւնները և տրամադրութիւնները. . . . .

Յաջողութիւն մաղթելով «Ռազմիկ»ին ցանկանք որ երկրում ապրած Ռուբէն Զարդարեան, որի անունը փայլում է ռուսահայ թերթերի մէջ տրված յայտարարութեանց մէջ, իսկ առաջին լոյս տեսած համարում չը կայ, գոնէ որոշ չափով իր անկախութիւնը պահպանէր առանց տարվելու այն շոյիչ կենսական պայմաններից, որ նրա համար, երկրից արտասահման խուսափելուց յետոյ, Անմիջապէս ստեղծեց պաշտօնական դաշնակցութիւնը.... ու չը մոռանար որ կուսակցական շահերը բարձր են, բայց ընդհանուր հայ ժողովրդի շահերը եւս առաւել բարձր.....

ԿՈՎԿԱՍ

ԱՐԻԻՆՈՏ ԷՋԵՐԻՑ

ՇՈՒՇԻՑ 4 հոկտեմբերի, 8 ժ. 5 ր. երեկոյեան մեզ հեռագրում են.

Գեներալ Տակայշվիլին, Աչոտ եպիսկոպոսի խնդրին, որ նրա երաշխաւորութեամբ նախընթաց օրը ձերբակալուած հայերին ազատեն, չպատասխանեց։ Երկրորդ անգամ Քեչանուլուբաբի վրայ յարձակում գործած բազմաթիւ թուրքերի մէջ ճանաչուած են Զաւադ աղա Զիւանշիրցու ծառաները։ Հայերը խնդրեցին անյապաղ եւ ժամանակին օգնութիւն հասցնել իրենց. սակայն այդ մասին ոչ մի կարգադրութիւն չհետեւեց Թուրք պրիստաւը սուտ տեղեկութիւն տուաւ, որ ոչինչ չի պատահել։ Թուրքերից վրէժ լուծելու համար հայերը հրկիզեցին եւ ոչնչացրին մի քանի հարեւան թուրք գիւղեր, այրեցին Զաւադ աղայի տունը։ Այս անգամ եպիսկոպոսը խիստ հեռագիր ստացաւ Տակայշվիլուց։ Զանախչիի մօտ չորս քաղաքացի զինուած թուրքեր սպանեցին մի հայի։ Սպանուած հայի ընկերը փախչելով ազատուեց եւ ճանաչեց մարդասպանների մէջ յայտնի չարագործ մսավաճառ թուրք Նասիբին։ Իշխանութիւնը նրան կալանաւորեց։ Երէկ տեղս հասաւ Բենդրցի զօրքերի մի բատալիոն։ Հայերը խաչերով խաչվառներով, դրօշակներով, երաժշտութեամբ երկար եւ բերկրալից «տրաներով» դիմաւորեցին զօրքերին։ Տեսարանը յիշեցնում էր ռուս-թուրքական պատերազմի ժամանակները, երբ հայերը մեծ ոգեւորութեամբ հանդիպում էին ռուսաց զօրքերին։

——

Բագուի ժամանակաւոր ընդհ. նահանգապետը հեռագրում է հոկտ. 1-ից. —«Շինուում են մեծ քանակութեամբ վիշկաներ. նաւթային շատ ֆիրմաներ սկսել են գործերը։ Բիբի-Հէյբաթում, բացի հինգ ֆիրմաներից, նոյնպէս գործի են սկսել։ Միւսներում էլ կըսկսուի, երբ նպաստներ ստանալու խնդիրը պարզուի։ Այժմ թէ՛ քաղաքում եւ թէ հանքերում խաղաղութիւն է տիրում» («Կավկազ»)։

—o—

Սկսելով աւելի խիստ խուզարկութիւններ, Բագուի ոստիկանութիւնը թուրքերի տներում երեւան է հանում հայերից կողոպտուած իրեր—գորգեր, կարի մեքենաներ եւայլն։ («Պազու»)։

Գանձակ, 30 սեպտ.

ՆՈՐ ԸՆԴՀԱՐՈՒՄ Գանձակից մօտ 30–40 վերստ հեռաւորութեան եւ սիրով,—խորհելով Սիւլէյմանիս մասին, ձայնս աւելի բարձրացաւ.—Այո, Դէֆին պէտք է ապրի. բայց ան հաւատարիմ պիտի մնայ իր սիրոջ, հաւատարիմ այն մարդուն որ կը սիրէ։ Ո՛հ, հայր իմ, անողոքաբար սխալ կը դատես Դէֆիդ էն ստոր ոճրագործ մը չէ. էն կը մեռնի, նոյն իսկ իր ձեռքով, քան թէ Ցէրը ուրանայ, կամ ապրի իբրեւ գարշելի էակ մը—անպատիւ կին մը։

Յուզմանս միջոցին ոտքի ելած էի. հեղ մը անգամ չը նայեցայ հօրս։ Զարհուրելի կարելիութիւնները, որոնց մասին կը խօսէի, իրենց ահաւոր տեսիլքներով երեւակայութեանս առջեւ կը պատկերանային։ Հօրս ձայնը, իմ յուզուած կացութեանս մէջ հեռուէն եկածի նման թուելով՝ ապշեցուց զիս.

—Թագաւորներու աղջիկն է, որ կը խօսի հոդ։ Փրկէ զիս, Դէֆիս Պիտի մեռնի՞ս, ուրեմն։

—Այո, հայր իմ, եթէ պէտք ըլլայ։

—Պէտք է, Դէֆիս։ Ինձ նկատմամբ ես կը հրճուիս, ու մասիդ... կրնա՞ս ուրախանալ... ինձ նայեցաւ պաղատագին ու կարօտակէզ։ Գլուխս թօթուեցի. Ո՛չ, գուրգուրացած եւ պաշտած հայրս իսկ հաճեցնելու համար՝ չէի կրնար ինքզինքիս անարդար ըլլալ։ «Ո՛հ, Աստուա՛ծ իմ, ապրի՛մ... էր հոգւոյս լուռ աղօթքս։

Քանի մը վայրկեանի լռութիւն տիրեց. որքա՜ն կը փափաքէի սեղեակս սլանալ ու հոն Մ[illegible]քէի հաւատարիմ գրկին մէջ արցունքներս թափել... Բայց հայրս տակաւին իր գործը վերջացուցած չէր ինձ հետ։ «Այո Դէֆիս, ըսաւ, իր քովը քաշելով զիս, կակնկալեմ եւ կը յուսամ, որ պիտի մեռնինք. սակայն ուրիշ պատահարներու համար ալ պէտք է պատրաստ գտնուինք։ Աննպատակ գնդակ մը կրնայ զիս քովդ պառկեցնել. այն ատեն... այն ատեն թիւրքին ճիրաններուն մէջ պիտի ըլլաս... այն ատեն...

—Այն ատեն պիտի ըլլայ ժամանակը, ցոյց տալու թէ ինչպէս կրնայ մեռնիլ թագաւորներու աղջիկը, ընդմիջեցի հանդարտութեամբ եւ հրպարտօրէն։

—Շատ լաւ խօսեցաւ, Դէֆիս, սակայն պէտք է ինձ երդնուս որ երբէ՛ք թոյլ չը պիտի տաս ինքզինքիդ կենդանի թիւրքերուն ձեռքը իյնալ։

—Խոստացայ, հայր իմ. ի՞նչու այլեւս երդումը։

—Երդում մը... երդում մը... գոչեց գրգռուած. զայն դոհացնելու համար—ինձ համար խոստումս ալ բաւական էր—իր ետեւէն կրկնեցի այն դար ըլլալ։ «Ո՛հ, Աստուա՛ծ իմ, ապրի՛մ... էր հոգւոյս լուռ աղօթքս։

Քանի մը վայրկեանի լռութիւն տիրեց. որքա՜ն կը փափաքէի սեղեակս սլանալ ու հոն Մ[illegible]քէի հաւատարիմ գրկին մէջ արցունքներս թափել... Բայց հայրս տակաւին իր գործը վերջացուցած չէր ինձ հետ։ «Այո Դէֆիս, ըսաւ, իր քովը քաշելով զիս, կակնկալեմ եւ կը յուսամ, որ պիտի մեռնինք. սակայն ուրիշ պատահարներու համար ալ պէտք է պատրաստ գտնուինք։ Աննպատակ գնդակ մը կրնայ զիս քովդ պառկեցնել. այն ատեն... այն ատեն թիւրքին ճիրաններուն մէջ պիտի ըլլաս... այն ատեն...

—Այն ատեն պիտի ըլլայ ժամանակը, ցոյց տալու թէ ինչպէս կրնայ մեռնիլ թագաւորներու աղջիկը, ընդմիջեցի հանդարտութեամբ եւ հրպարտօրէն։

—Շատ լաւ խօսեցաւ, Դէֆիս, սակայն պէտք է ինձ երդնուս որ երբէ՛ք թոյլ չը պիտի տաս ինքզինքիդ կենդանի թիւրքերուն ձեռքը իյնալ։

—Խոստացայ, հայր իմ. ի՞նչու այլեւս երդումը։

—Երդում մը... երդում մը... գոչեց գրգռուած. զայն դոհացնելու համար—ինձ համար խոստումս ալ բաւական էր—իր ետեւէն կրկնեցի այն

Դէմքին պայծառութիւնը անհետացեր էր։

—Ապրի՛լ... այո, հայր իմ։

—Ուրեմն ապրէ՛, գոչեց էն, բովանդակ դէմքին վրայ կծու հեգնութիւն մը արտայայտելով։ Վաղը մահմետական մը դարձիր ու ապրէ. դժուարութիւն չկայ ապրելու մէջ. քու դայեակ գեղեցկութիւնդ տոփոտ արիւնարբու սուլթանին համբոյրներուն նուիրէ. ստրուկներու մայրը եղիր. ապրէ իբրեւ ուրացող մը—իբրեւ բռնակալի տոփանքին անպատիւ խաղալիք մը... ԱՊՐԷ...

Զայնը հսկայ սրահին մէջ կարձագանգէր. սարսափելի էր իր բարկութիւնը տեսնել։ Մէկ երկու վայրկեան անշարժ մնացի, բայց հօրս նրբատամամբ կարօտակէզ գորով մը շուտով ընկճեց այն զայրոյթը, որ կուրծքիս մէջ արթննալ սկսած էր։

—Ո՛հ. հայր իմ, գոչեցի, անողոք ես Դէֆիդ հանդէպ, անգթօրէն անարդար։ Կը կարծե՞ս թէ այն արիւնը, որ կը հոսի իր երակներուն մէջ ալ, պակաս ճշմարիտ, պակաս անարատ է քան այն, որով դուն կը պարծիս։ Կը կարծե՞ս որ Իագրատաւնիներու արիւնը պղտոր հոսանքով մը կը վազէ իմ՛ երակներուն մէջ։ Դէֆին պէտք է ապրի. իր սիրտը կը բաբախէ երիտասարդութիւնով, եռանդով եւ սիրով,—խորհելով Սիւլէյմանիս մասին, ձայնս աւելի բարձրացաւ.—Այո, Դէֆին պէտք է ապրի. բայց ան հաւատարիմ պիտի մնայ իր սիրոջ, հաւատարիմ այն մարդուն որ կը սիրէ։ Ո՛հ, հայր իմ, անողոքաբար սխալ կը դատես Դէֆիդ էն ստոր ոճրագործ մը չէ. էն կը մեռնի, նոյն իսկ իր ձեռքով, քան թէ Ցէրը ուրանայ, կամ ապրի իբրեւ գարշելի էակ մը—անպատիւ կին մը։

Յուզմանս միջոցին ոտքի ելած էի. հեղ մը անգամ չը նայեցայ հօրս։ Զարհուրելի կարելիութիւնները, որոնց մասին կը խօսէի, իրենց ահաւոր տեսիլքներով երեւակայութեանս առջեւ կը պատկերանային։ Հօրս ձայնը, իմ յուզուած կացութեանս մէջ հեռուէն եկածի նման թուելով՝ ապշեցուց զիս.

—Թագաւորներու աղջիկն է, որ կը խօսի հոդ։ Փրկէ զիս, Դէֆիս Պիտի մեռնի՞ս, ուրեմն։

—Այո, հայր իմ, եթէ պէտք ըլլայ։

—Պէտք է, Դէֆիս։ Ինձ նկատմամբ ես կը հրճուիս, ու մասիդ... կրնա՞ս ուրախանալ... ինձ նայեցաւ պաղատագին ու կարօտակէզ։ Գլուխս թօթուեցի. Ո՛չ, գուրգուրացած եւ պաշտած հայրս իսկ հաճեցնելու համար՝ չէի կրնար ինքզինքիս անարդար ըլլալ։ «Ո՛հ, Աստուա՛ծ իմ, ապրի՛մ... էր հոգւոյս լուռ աղօթքս։

Քանի մը վայրկեանի լռութիւն տիրեց. որքա՜ն կը փափաքէի սեղեակս սլանալ ու հոն Մ[illegible]քէի հաւատարիմ գրկին մէջ արցունքներս թափել... Բայց հայրս տակաւին իր գործը վերջացուցած չէր ինձ հետ։ «Այո Դէֆիս, ըսաւ, իր քովը քաշելով զիս, կակնկալեմ եւ կը յուսամ, որ պիտի մեռնինք. սակայն ուրիշ պատահարներու համար ալ պէտք է պատրաստ գտնուինք։ Աննպատակ գնդակ մը կրնայ զիս քովդ պառկեցնել. այն ատեն... այն ատեն թիւրքին ճիրաններուն մէջ պիտի ըլլաս... այն ատեն...

—Այն ատեն պիտի ըլլայ ժամանակը, ցոյց տալու թէ ինչպէս կրնայ մեռնիլ թագաւորներու աղջիկը, ընդմիջեցի հանդարտութեամբ եւ հրպարտօրէն։

—Շատ լաւ խօսեցաւ, Դէֆիս, սակայն պէտք է ինձ երդնուս որ երբէ՛ք թոյլ չը պիտի տաս ինքզինքիդ կենդանի թիւրքերուն ձեռքը իյնալ։

—Խոստացայ, հայր իմ. ի՞նչու այլեւս երդումը։

—Երդում մը... երդում մը... գոչեց գրգռուած. զայն դոհացնելու համար—ինձ համար խոստումս ալ բաւական էր—իր ետեւէն կրկնեցի այն

սոսկալի բառերու ֆորմիւլան, որոնց այստեղ գրելը հայհոյանք մը պիտի նկատուէր իմ կողմէս։ Այս լիմալէն վերջ հայրս գոհ էր։ Գրասեղանի մը մօտ գնաց ու գաղտնի գզրոց մը բանալով դուրս հանեց փոքրիկ գեղակերտ դաշոյն մը։ Պատեանէն հանելով ձեռքս տուաւ։

—Դամասկոսեան ամենաընտիր գործ է, միշտ մօտդ պահէ. անպատուութեան դէմ վստահելի պաշտպանութիւն մըն է կամ այս, ըսաւ գետին դնելով փոքրիկ չիշ մը, որուն մէջ հեղուկի կաթիլ մը կը շողշողար։ Երկուքէն ո՞ւ է մէկը կարելի է երկուքը միասին լաւագոյն են։

Դաշոյնը պատեանին մէջ դնելով, մանր չիշին հետ միասին ձեռքս դրաւ։ «Այժմ կրկնակի զինուած ես—թոյն ու դաշոյն։ Դէֆիս պատիւը ձեռքն է հիմա։ Այլանդակ խոժոռ քմծիծաղ մը—օիծաղ մը, որ երբէք չէի տեսած առաջ ու կաղօթեմ չը տեսնել կրկին—եկաւ հօրս դէմքին վրայ, երբ այդ մահու գործիքները ձեռքս կը դնէր։ Առած պահուս չափազանց կը դողդոջէի ու լուռ աղօթքը կրկին հոգիս վեր սաւառնեցաւ. «Ո՛հ, Աստուած, Ապրի՛մ...»

(Շարունակելի)

—o—

ւորութեան վրայ յարձակում է սեղի ունեցել, բայց, չնորհիւ պ. գաւառապետ Բէյուտի, իսկոյն ևեթ առաջն առնուել է։

Գանձակի արեւելեան կողմը դէպի Դիւլիստան կան բուսականաչափ հայ գիւղեր, կան Նմանապէս և Թուրք գիւղեր։

Այս գարաւոր հարեւանները՝ չգիտեմ ինչից դրդուած հաւաքուել են յարձակուելու Աղջաղալա կոչուած հայ գիւղի վրայ, որ մօտ 100 տուն է. սրա մօտ կան Ղարաչինար, Էրքեջ, Երիշէն, Ներքիշէն եւ Մանասաշէն գիւղերը, այնպէս որ եթէ մի որեւէ բան պատահի դրանց շուրջը գտնուող Թուրք գիւղերի կողմից որոնք են Մոլլավալադար, Բոյահմադը, Ղզբլ հաջը, Զեյվա, Քոլանի եւ Գեօբրան, հայերը կարող են դիմադրել, մինչեւ անգամ յաղթանակել. բայց արի տես, որ Զիւանչիրի գաւառից եկել են բազմաթիւ ձիաւոր արիւնարբուներ եւ թալանչիներ իրանց բէկերի առաջնորդութեամբ, ինչպէս օրինակ Աղբգեօզալովները;

Պարզ է, որ այս դէպքում հայերը անզօր կը լինէին նրանց դիմադրելու։

Ուստի եւ այդ խուժամուխ ամբոխը տեսնելով, աղջաղալացիք իսկոյն շտապել են քաղաք մարդ ուղարկել օգնութեան։ Ահա այս եկող մարդն էր որ պատմեց հետեւեալը.

«Այսօր 26-ին մեր գիւղի գիշերապահները նկատում են ձիաւորների մի սեռ խումբ. իսկոյն զգլիս են գիւղ եւ իմաց տալիս։ Գիւղացիք պատրաստւում են, բայց կասկածելիս են լինում լուրի հաստատութեան վրայ. իսկ երբ ամէն բան պարզւում է, դուրս են գալիս գիրքեր բռնում. Հէնց այդ ժամանակ, այդ գիւղումն է լինում գաւառապետը հարիւր կազակներով; Թուրքերը յանկարծակի են գալիս. առաջնելին տեսնում են գաւառապետին կոչակնելով, իսկ յետեւներում մեր հայ կարիճներին։ Անսպասելի կրակ է բացւում Թուրքերի վրայ. փախչում են թողնելով մի քանի սպանուած ձիեր։ Այս պատմողը աւելացրեց՝ նոխ քան մեր գիւղի վրայ գալը, Սանասաշէնի ապրանքը տանելիս են եղել, մերոնք խլել են Թուրքերի ձեռքից բոլորը, իսկ գիւղացիներին բերել մեր գիւղը։ Ապա ասում էր, որ այդ ձիաւորների հետ կային եւ անզէն ձիաւորներ ջուալներով եւ մափրաշներով։

Ինձ ուղարկել է գաւառապետը զեներալ մայոր Տակայշվիլուց 100 կոզակ խնդրելու։ Որպէս լսեցինք արդէն կարգադրուած է։ Գաւառապետը դեռ եւս այնտեղ է. Թուրքերը սպասում են նրա այնտեղից հեռանալուն, թէ վերջը ի՞նչ կլինի, մեզ անյայտ է առայժմս։

Վերջին ժամանակներս գաւառապետի հայեացքը փոխուել է դէպի հայերը. ուրիշ խօսքով՝ նա արդարութեան կողմն է բռնել։ Նա այս նոյն դէպքի ժամանակ Աղջաղալայում ասել է գիւղացոց, թէ ես մինչեւ այժմս կարծում էի, թէ հայերը սուտ են ասում Թուրքերի յարձակումների մասին, բայց այժմ ես համոզուած եմ, որ դրանքեն մեղաւորը»։

«ԱՐՇԱԼՈՅՍ»

Շուշի 17 հոկտեմբերի

Խռովութիւնները շարունակւում են խաչէն գաւառում։ Թիւրքերը մի քանի անգամ յարձակւեցին Կէշան եւ Ուլուբաբ գիւղերի վրայ եւ թալանեցին։ Հայերը սպասեցին որ ոճրագործները պատժւեն, սակայն իզուրայն ժամանակ նրանք իրենց կողմից յարձակւեցին եւ աւերեցին չորս թրքական գիւղ ու հրդեհեցին թիւրք հրոսակների առաջնորդ՝ Զավադ Զվանչիրի ագարակները։

«ԴՐՕՇԱԿ»

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Բարիզէն կը հաղորդեն որ իշխան Ֆէրտինանտ կը տառապի իր հին անգլիական հիւանդութենէն։

— Հոկտեմբեր 15-ին ազգային ժողովը բացուեցաւ իշխանին բացակայութեանը։ Գահական ճառը կարդաց նախարարապետ պ. Բուչօ Բեթրով։

— «Վէչէրնա Բոշթա» թերթի խմբագրապետ պ. Ս. Շանկով հրաժարեցուցուած է այդ պաշտօնէն աշխատակիցներու պահանջով և տնօրէնին համաձայնութեամբ։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐՔԻԱ

Պոլսէն պուլկար թերթերու կը հեռագրեն որ Սուլթանը քիչ մը կակուղցեր է Մակեդոնիոյ Ելեմտից քոնթրոլի վերաբերմամբ և պետութեանց առաջարկած է միայն ձեւակերպումին մէջ թեթեւ փոխոխութիւններ ընել։

— Եըլտզէն եկած խիստ հրամանի մը համաձայն Հիլմի փաշան Մակեդոնիոյ յետնեալ տուրքերը կը ժողովէ ամենայն խստութեամբ։

Այս բոլորը պիտի վերջանայ մինչեւ քոնթրոլի խնդիրը լմնալը։

— Պոլսոյ հայ եպիսկոպոսները դիմած են Հայրիկին որ ան իր հեղինակութիւնը ի գործ դնէ Կովկասէն խմբեր չանցնին դէպի Թուրքիա։

— «ԹԱՆ» կը հաղորդէ որ Պոլսոյ Աւստրիական դեսպան Կալիչէ ծերութեան պատճառով պիտի հրաժարի պաշտօնէն։ Կալիչէ դեսպաններուն ամենէն հինն էր Պոլսոյ մէջ և ամենէն աւագը։

ՌՈՒՍԻԱ

Բեթերսպուրկ, Մոսկուա և այլ քաղաքներ խզուած են երկրի միւս մասերուն հետ, որովհետեւ երկաթուղային բանուորները գործադուլի մէջ են։

Հաղորդակցութեան նախարար իշխան Խիլքով Մոսկուայէն լոքոմոթիֆով միայն կրցեր է Բեթերսպուրկ վերադառնալ։ Բեթերսպուրկի և Մոսկուայի համալսարանները կրկին գոցուած են։ Բեթերսպուրկի մրթինգներուն մասնակցեր են նաւաստիներ և կայսերական թիկնապահ զօրաց սպաներ։ Զինուորական դատախազը 32 սպայի դատի ենթարկած է յեղափոխական շարժումներուն մասնակցած ըլլալու համար։ Բեթերսպուրկէն կը հաղորդեն որ նախարարութիւնը Ցարին թելադրած է Սահմանադրութիւն տալ և շուտով կսպասուի ցարի ուքազը։

ՖՐԱՆՍԱ

Նախագահ Լուպէ Սպանիայէն անցած է Բորթուգալիա, ուր նոյնպէս փառաւոր ընդունելութիւն գտեր է. կսպասուի որ Սպանիոյ թագաւորը նոյեմբերին Բարիզ փոխայցելութեան գայ։

— Անգլիական կառավարութիւնը իր համակրութիւնը դէպի Ֆրանսան և նախագահը շեշտելու համար կարգադրած է որ անգլիական զրահաւորներ Լուպէի ընկերակցին մինչեւ Ֆրանսայի ջուրերը, ու Ճիպրալթարի ամրութիւններէն թնդանօթներ արձակուին։

ՅՈՒՆԱՍՏԱՆ

Աթէնքէն կը հաղորդեն որ հոն ձերբակալուած հայերը տարուկէսական բանտարկութեան դատապարտուած են չնորհիւ անգլիական միջամտութեան։

— Աթէնքի թերթերը կը շարունակեն իրենց թշնամական դիրքը Պուլկարիոյ հանդէպ։

ԻՏԱԼԻԱ

Հակաքինուորական բրօքականդը մեծ ծաւալ ընդունած է. կառավարութիւնը խիստ միջոցներ ձեռք առած է դէպի ընկերավարականները, սակայն չի յուսացուիր թէ ատով առաջքը կառնուի։

Печатница на П. Глушковъ и С-ие, Варн

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ. Յ. ՔԻՐԻՃԵԱՆ

Գործակալ զանազան լեզուէ լրագրաց և միջնորդ

(Պուլկարիա) ՎԱՌՆԱ

Եթէ կուզէք ո և է լեզուով Հանդէսի և Թերթի բաժանորդագրուիլ մինչեւ իսկ Միամսեայ և կամ հատով Գնել անոնցմէ։

Եթէ ունիք ԱԽՈՒ կամ ՎԱՐՁՈՒ Տուն, Խանութ, Վաճառատուն, Այգի Պարապ գետին «արսա» եայլն։

Եթէ կուզէք ԴՆԵԼ կամ ՎԱՐՁԵԼ Տուն։ Խանութ, Վաճառատուն, Այգի. Պարապ գետին եայլն.

Եթէ կը փափաքիք ունենալ Ձեր Վաճառատան և կամ Դրասենեկին մէջ լուրջ Համարակալ, Քարտուղար, երաշխաւորեալ Հաւաքիչ և ո և է այլ Պաշտօնեայ եւ կամ Ձեր Խանութին համար Գործաւոր կամ Աշակերտ։

Եթէ կը փնտռէք ոեւէ գործ Վաճառատան ու Դրասենեկի մէջ եւ կամ Արհեստաւորի մը քով իբր Գործաւոր եւ կամ իբր Աշակերտ.

Եթէ կուզէք բարոյականին երաշխաւորեալ Խոհարար, Ստնտու, Սպասաւոր, Սպասուհի, եւայլն ունենալ։

Եթէ կը փափաքիք տան մէջ ծառայել իբր Խոհարար Ստնտու, Սպասաւոր, Սպասուհի եւայլն։

Եթէ կուզէք Ծախել Ձեր առձեռն ունեցած ոեւէ մէկ գործը Ըլլայ Առեւտրական եւ կամ Արհեստական

Եթէ կը փնտռէք պատրաստ գործ մը Առեւտրական եւ կամ Արհեստական այսինքն ոեւէ Առեւտրական տուն, Արհեստաւորի խանութ եւայլն.

Եթէ որոշած կը Ձեր առձեռն ունեցած ոեւէ մէկ գործը թողուլ եւ Ձեր բնակած քաղաքէն հեռանալ եւ կուզէք այդ կերպ պատճառներով Ծախել Ձեր գործատեղւոյն եւ կամ բնակարանին կահ, կարասիները, եւ կամ Ձեր արհեստաւորի Գործիքները.

Եթէ կը փափաքիք վերոյիշեալ վաճառելի Իրերէն գնել.

Դուք ամենքդ ալ ապահովաբար դիմեցէք ՎԱՌՆԱ «Սիթէ տը Վառնա» թիւ 32 գրասենեակս եւ վստահ եղիք որ լիուլի գոհացում պիտի գտնէք Ձեր ամենատեսակ սոյն օրինակ պէտքերուն.

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ Յ. ՔԻՐԻՃԵԱՆ

Ծանօթութիւն.— Քաղաքիս եւ Պուլկարիայէն զատ նոյն իսկ Արտասահմանէն ինձ ուղղուած նամակներուն շուտ ընդ փոյթ կը պատասխանեմ.

20—2